ՏԵՂԵԿԱՆՔ ՆԱԽԱԳԾՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

~~*Հոդված 1.* Հայաստանի Հանրապետության 1985 թվականի դեկտեմբերի 12-ի վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգիրքը լրացնել 124.8-րդ հոդվածով՝~~

~~*«Հոդված 124.8. Վաճառքի կամ վարձույթի ենթակա տրանսպորտային միջոցները չնախատեսված վայրում կայանելը*~~

~~1. Վաճառքի կամ վարձույթի ենթակա տրանսպորտային միջոցների սեփականատիրոջ կողմից համայնքային նշանակության ճանապարհների վրա՝ կայանման համար նախատեսված վայրերում տրանսպորտային միջոցները կայանելը, եթե համայնքի ղեկավարի որոշմամբ տվյալ վայրը չի սահմանվել որպես վաճառքի կամ վարձույթի ենթակա տրանսպորտային միջոցների կայանման վայր՝~~

~~առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի տասապատիկի չափով:~~

~~2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված խախտման համար տուգանք նշանակման օրվանից հետո՝ 3 օրից հետո կրկին կատարելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երուսունապատիկի չափով:»:~~

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 1985 թվականի դեկտեմբերի 12-ի վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգիրքը (այսուհետ՝ Օրենսգիրք) լրացնել նոր 124.8-րդ հոդվածով՝

«Հոդված 124.8. Վաճառքի կամ վարձույթի ենթակա տրանսպորտային միջոցները չնախատեսված վայրում կայանելը

1. Վաճառքի կամ վարձույթի ենթակա տրանսպորտային միջոցների սեփականատիրոջ կողմից համայնքային նշանակության ճանապարհների վրա՝ կայանման համար նախատեսված վայրերում տրանսպորտային միջոցները կայանելը, եթե համայնքի ղեկավարի որոշմամբ տվյալ վայրը չի սահմանվել որպես վաճառքի կամ վարձույթի ենթակա տրանսպորտային միջոցների կայանման վայր՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի տասապատիկի չափով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված խախտումը, որը կատարվել է վարչական տույժի միջոց կիրառելուց երեք օր հետոկրկին անգամ՝ մեկ տարվա ընթացքում՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երեսնապատիկի չափով:

3. Սույն հոդվածի իմաստով վաճառքի կամ վարձույթի ենթակա տրանսպորտային միջոց են համարվում այն տրանսպորտային միջոցները, որոնց վրա (կամ այլ վայրում) առկա է՝ վաճառքի կամ վարձույթի մասին գրառում:

Հոդված 2. Օրենսգրքի 219.1-րդ հոդվածի 2-րդ մասում «124.7-րդ հոդվածով,» բառից հետո լրացնել «124.8-րդ հոդվածով» բառ~~ով~~երը:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը ~~օրվան~~ հաջորդող վաթսուներորդ ~~օրը~~ օրվանից: